ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի (**այսուհետ՝ Կարգ**) 2.2-րդ, 2.4-րդ և 2.5-րդ կետերով,

հաշվի առնելով այն, որ 2019 թվականի համար նախատեսվող հանրային պաշտպանների թափուր տեղերի (հաստիքների, **այսուհետ՝ Թափուր տեղեր**) քանակը կազմում է ընդամենը **18**, այն է՝

1. Արարատի մարզ - **մեկ տեղ՝** մեկ լրիվ հաստիք քրեական ուղղվածության.
2. Գեղարքունիքի մարզ - **երկու տեղ՝** մեկ 0,5 հաստիք քրեական ուղղվածության, մեկ 0,5 հաստիք հաստիք քաղաքացիական և վարչական ուղղվածության.
3. Լոռու մարզ - **երկու տեղ՝** մեկ լրիվ հաստիք քրեական ուղղվածության, մեկ 0,25 հաստիք հաստիք քրեական ուղղվածության
4. Կոտայքի մարզ - **մեկ տեղ՝** 0,25 հաստիք քաղաքացիական ուղղվածության.
5. Շիրակի մարզ - **երկու տեղ՝** մեկ լրիվ հաստիք քրեական ուղղվածության մեկ 0,25 հաստիք հաստիք քաղաքացիական և վարչական ուղղվածության.
6. Սյունիքի մարզ - **մեկ տեղ՝** մեկ 0,25 հաստիք քրեական ուղղվածության,
7. Տավուշի մարզ - **երեք տեղ՝** երկու 0,25 հաստիք քրեական ուղղվածության, մեկ 0,25 հաստիք հաստիք քաղաքացիական և վարչական ուղղվածության.
8. Երևան քաղաք - **վեց տեղ՝** չորս լրիվ հաստիք քրեական ուղղվածության, երկու լրիվ հաստիք քաղաքացիական և վարչական ուղղվածության.

նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործնականում հանրային պաշտպանի թափուր հաստիքներ կարող են առաջանալ ոչ միայն տարեվերջին, այլ նաև տարվա ընթացքում, ինչպես նաև այն, որ անհրաժեշտության դեպքում հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ ժամավճարային դրույքաչափեր նախատեսող աշխատանքային պայմանագրեր կնքելիս, որպես կանոն, նախապատվությունը տրվում է հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված փաստաբաններին.

ՈՐՈՇԵՑԻ՝

15 նոյեմբերի 2018թ.
թիվ 396-Լ

1. 2019 թվականի համար հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացնել հետևյալ մրցույթները (**այսուհետ՝ Մրցույթ**)՝

1) **քաղաքացիական և վարչական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ՝** Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների Թափուր տեղերը համալրելու համար.

2) **քրեական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ՝** Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների Թափուր տեղերը համալրելու համար։

2. Սահմանել, որ՝

1) **Մրցույթի գրավոր փուլը** կանցկացվի ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-3 հասցեում (ՀՀ փաստաբանական դպրոց, 3-րդ հարկ) **2018 թվականի նոյեմբերի 30-ին, ժամը 11.00-ին։** Մրցույթի գրավոր փուլի տևողությունը սահմանվում է 4 (չորս) ժամ.

2) Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են սույն որոշումը հրապարակելու օրվանից մինչև 2018 թվականի նոյեմբերի 26-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00-ից մինչև 17:00-ը ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ հասցեում.

3) փոստով ուղարկված դիմումները չեն համարվի ընդունված, եթե ՀՀ փաստաբանների պալատը ծրարը փաստացի ստանա 2018թ. նոյեմբերի 26-ից հետո.

4) **Մրցույթի գրավոր փուլը հաղթահարած հավակնորդը կհրավիրվի հարցազրույցի** Կարգի 4.11 կետի համաձայն։

3. Հաստատել հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու դիմումի ձևը՝ համաձայն հավելվածի:

4. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- Մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությունը տեղադրել ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում և վարչական շենքում (4-րդ հարկ) գտնվող հայտարարությունների տախտակի վրա.

- օժանդակել մրցութային հանձնաժողովին Մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

15 նոյեմբերի 2018թ.
թիվ 396-Լ
ք. Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի 15.11.2018թ. թիվ 396-Լ որոշման

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատին

_____ից
(անուն, ազգանուն)

արտոնագրի № _____

հասցե՝ _____

էլեկտրոնային փոստի հասցե՝

_____

մասնագիտական ուղղվածությունը՝

_____
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

«____» _____ 201____թ.

Դ Ի Մ Ո Ւ Մ
հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով
անցկացվող մրցույթին մասնակցելու

Ցանկանում եմ մասնակցել հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով կազմակերպվող մրցույթին վերը նշված մասնագիտական ուղղվածությամբ, հետևյալ աշխատավայրում *(նշել միայն մեկ նախընտրած տարբերակը)* ՝

☐ Երևան քաղաք, կամ

☐ _____ մարզ
(նշել մարզի անվանումը)

Հայտնում եմ, որ՝

- տիրապետում եմ համակարգչային հմտությունների.
- համաձայն եմ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ով սահմանված դրույթների հետ:

Դիմող՝ _____
(ստորագրություն)